# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> նոյեմբերի 2016թ. N 106

ք. Արմավիր

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N1129-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի (Էջմ.) համայնքապետարանում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

*կարգադրում եմ՝*

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել երեք աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2016 թվականի նոյեմբերի 14-ի*
*N 226 կարգադրության*

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Գևորգյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.

*Անդամներ՝*

Ա. Դարբինյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Կ. Պետրոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ.

Ա. Պողոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Արաքս (Էջմ.) համայնքի նախկին ղեկավար՝ Ավագ Միքաելյան.

Ընդունող՝
Արաքս (Էջմ.) համայնքի նորընտիր ղեկավար՝ Վարդան Գրիգորյան:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**